Տարալեզու փաստաթղթի ստեղծում

Ներմուծեք ստորև բերված անգլերեն - հայերեն - ռուսերեն բառարանը.

left – ձախ – левый
right – աջ – правый
center – կենտրոն – центр
color – գույն – цвет
page – էջ – страница
open – բացել – открыть
new – նոր – новый
save – պահպանել – сохранить

Բառարանը ներմուծելու համար քայլ առ քայլ իրականացրեք հետևյալ գործողությունները.

1. *Start* գլխավոր մենյուից հաջորդաբար ընտրելով *All Programs, Microsoft Office, Microsoft Office Word 2007* գրառումները՝ *Word* տեքստային խմբագրիչի միջավայր մտեք:
2. Այբուբենի փոփոխման տարբերանշանի վրա մկնիկի աջ սեղմակը սեղմեք և թողեք այնքան, մինչև այնտեղ հայտնվի ԱՄՆ-ի դրոշը՝ (լատինական այբուբենը):
3. Ընտրեք *Home* ներդիրի *Font* խմբի Arial Armenian կոճակը:
4. Մկնիկի ցուցիչով ընտրեք ցուցակը բացող ▼ նշանն ու բերված ցուցակից ընտրեք *Arial Armenian* տառատեսակը:
5. Մկնիկով ընտրեք *Home* ներդիրի *Font* խմբի 12 կոճակին կից ▼ նշանն ու բացված ցուցակից ընտրեք *14* տառաչափը:
6. Ներմուծեք *left* բառը, ապա՝ գծիկ (-):
7. *Alt* և *Shift* ստեղների համատեղ սեղմումով ընտրեք հայկական այբուբենը:
8. Ներմուծեք *ձախ* բառը, ապա՝ գծիկ (-):
9. Այբուբենի փոփոխման տարբերանշանի վրա մկնիկի աջ սեղմակը սեղմեք և թողեք այնքան, մինչև տարբերանշանին հայտնվի Ռուսաստանի Դաշնության դրոշը՝ :
10. Վերը նկարագրված եղանակով ընտրեք ռուսական որևէ տառատեսակ (օրինակ՝ *Baltica Cirillic*):
11. Ներմուծեք *левый* բառը:
12. *Enter* ստեղնով անցում կատարեք հաջորդ տողին:
13. Նույն եղանակով ներմուծեք բառարանի մնացած մասը:
14. Ստեղծված փաստաթուղթը *Lab_2_** անունով պահպանեք տվյալ դասարանին հատկացված թղթապանակում, *-ի փոխարեն ներմուծելով աշակերտի դասամատյանի համարը:
15. Ավարտեք աշխատանքը՝ օգտվելով պատուհանի փակման կոճակից: